

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Արտաքին կապերի ոլորտում 2013թ-ի ընթացքում Լոռու մարզպետարանի աշխատակազմի կատարած
աշխատանքների վերաբերյալ

h/ h	Աշխատանքի ուղղությունը	Միջոցառման անվանումը		Միջոցառումների ժամկետները		Աշխատանքի կատարման արդյունքները
		նախատեսված	Չնախատեսված, սակայն փաստացի կատարված	Նախատեսված	փաստացի	
	1	2ա	2բ	3ա	3բ	4
1.	Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող ծրագրերով՝ մարզպետարանի իրավասության ոլորտներին վերաբերող դրույթների և/կամ այլ փաստաթղթերի կատարում	Հայ-Գերմանական համագործակցության շրջանակներում KFW գերմանական վարկային ծրագիր		2013թ	2013թ տարվա ընթացքում	«Լոռի-ջրմուղկույուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում ջրամատակարարման համակարգերի բարելավման համար ծրագրի կողմից նախատեսվել էր 1մլրդ 529.4մլն դրամ, որն իրականացվել է ամբողջությամբ, պետ բյուջեի կողմից համաֆինանսավորում է եղել 509.8մլն դրամի արժողությամբ: Ընդհանուր առմամբ վերը նշված համայնքներում իրականացվել է 2.038մլն979հազ դրամի աշխատանքներ:
		«Թափոնների կառավարում – ԵՀԳԳ Արեւելք» տարածաշրջանային ծրագիր		2009-2013թթ.	2013թ.	Ծրագրի շրջանակներում և այլ շահագրգիռ կառույցների համագործակցությամբ իրականացվել են. <ul style="list-style-type: none"> ✓ Ռեկուլտիվացվել և ծառատունկ է կատարվել Ախթալայի ԼՀԿ-ի «Նազիկ» պոչամբարի 1 հա վրա: 2013թ. գարնանը անցկացված մոնիտորինգի արդյունքները փաստել են ծառերի և թփերի 97%-անոց կաջողականություն: ✓ Ռեկուլտիվացվել և կանաչապատվել է Ալավերդու նախկին, ափամերձ աղբավայրը՝ 2 հա: Ռեկուլտիվացված տարածքը այլևս որպես աղբավայր չի ծառայում, իսկ կանաչապատումը տվել է իր դրական արդյունքները: ✓ Ընթացքի մեջ է մարզում առկա պոչամբարների գույքագրման գործընթացը, որի արդյունքում կկատարվի նրանցից առաջացող հնարավոր բնապահպանական ու առողջապահական ռիսկերի գնահատում, որտեղ կտրվեն նաև տվյալ ռիսկերի վերացմանն ու մեղմացմանն ուղղված համապատասխան առաջարկություններ:
		«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագրի		2011-2015թթ	2013թ.	2013թ տեխնիկական միջոցներ են տրամադրվել Ահնիձոր, Մարց և Քարինջ համայնքներին մեկական հատ՝ հակավորող մեքենա, հնձիչ, փոցխ և ձեռքի հնձիչ, Դսեղ համայնքին՝ հակավորող մեքենա, հնձիչ, փոցխ, Լորուտ համայնքին՝ փոցխ և հնձիչ: Ընդամենը 2013թ. տեխնիկական միջոցների և շինարարական աշխատանքների վրա ներ դրված գումարը կազմել է 150 մլն. դրամ :

	Քաունթերփարթ հիթերնեշնլ Հայաստան (USAID)		2013թ	2013թ տարվա ընթացքում	<p>Լոռու մարզի 7 քաղաքային եւ գյուղական համայնքներում նախատեսվել և իրականացվել են 99.023մլն դրամի աշխատանքներ, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Դեբեդ համայնքի մարզամշակութային կյանքի ակտիվացում 13.47մլն դրամ (կինոթատրոնի ստեղծում, գրադարանի վերազինում) ✓ Դսեղ համայնքի մշակութային կյանքի, մանկապարտեզի ստեղծում եւ կահավորում, երիտասարդության իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝ 14մլն դրամ ✓ Ծաթեր համայնքի հանդիսությունների սրահի եւ գրադարանի ստեղծում՝ 13.653մլն ✓ Վանաձոր համայնքի թիվ 5 ՆՈՒՀ-ի կարողությունների զարգացում, ավագանու նիստերի դահլիճի արդիականացում, կենտրոնական փողոցներում եւ հասարակական վայրերում նստարանների տեղադրում,՝ 22մլն դրամ ✓ Ալավերդում «Իմ հնամյա Ալավերդի» փառատոնի կազմակերպում, գեղագիտական կրթության զարգացում՝ 22 մլն դրամ ✓ Ախթալա համայնքի բնապահպանական և երիտասարդության իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ 2 մլն դրամ, Բարիտ թաղամասի մարզահրապարակի կառուցում՝ 7մլն դրամ, արվեստի դպրոցին գույքի, երաժշտական գործիքների տրամադրում և մշակութային կյանքի ակտիվացում՝ 2 մլն դրամ ✓ Մեծ Այրում համայնքի մշակութային կյանքի խթանում՝ 2.9մլն դրամ:
	«Ասիական բանկ» վարկային ծրագիր		2013թ	2013թ.տարվա ընթացքում	«Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 38 համայնքներում խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման համակարգերի բարելավման համար նախատեսվել էր 607.5 մլն դրամ, իրականացվել են 204.5մլն դրամի աշխատանքներ
	«Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղ		2013 թ	2013թ տարվա ընթացքում	<p>Մարզում գործող երկու գրասենյակների միջոցով իրականացվել են ավելի քան 138.574 մլն դրամի աշխատանքներ, որից՝</p> <ul style="list-style-type: none"> • Ալավերդու գրասենյակի միջոցով Թումանյանի տարածաշրջանի 10 քաղաքային եւ գյուղական համայնքներում իրականացվել են՝ 47.57 մլն դրամ • Ստեփանավանի գրասենյակի միջոցով՝ Ստեփանավանի եւ Տաշիրի տարածաշրջանների 20 համայնքներում՝ 91.004 մլն դրամ
	Հայ -Շվեդարական Դիակոնիա հիմնադրամ		2013թ	2013թ արվա ընթացքում	<p>Կազմակերպությունը իրականացրել է բարեգործական եւ տնտեսության զարգացմանն ուղղված ծրագրեր մոտ 37մլն358հազ դրամ արժողությամբ, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> • Մարզի Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Թումանյան, Ջիլիգա, Գոգարան, Վահագնաձոր համայնքներում սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է տաք հագուստ եւ սնունդ, Վանաձորից թվով 20երեխաներ հանգստացել են 'Գուգարք' ճամբարում • Արջուտ համայնքում իրականացվել է մեղվաբուծության ծրագիր • կահավորվել է Թումանյան համայնքի մանկապարտեզը, նախաձեռնվում է վերազինել համայնքի կարի արտադրամասը, կրացվի 15 աշխատատեղ

2.	<p>Օտարերկրյա պետությունների տարածքային միավորների հետ համաձայնագրի կամ փաստաթղթերի /ծրագրերի կնքում և կատարում</p>	<p>Համագործակցություն Լոռու մարզպետարանի եւ Ֆրանսիայի Պրովանս Ալպ Կոտ դ'Ազյուր մարզի Զինվորական եւ Հյուրընկալ Երուսաղեմի Սուրբ Ղազար Միաբանության միջեւ Պրովանս կոտ Դ'Ազյուր առաջնորդական կարգադրություն N09-01</p>		2013թ	2013թ տարվա ընթացքում	<p>Սպիտակ քաղաքում 2009թ-ից ստեղծված է «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» կոմիտեի աջակցությամբ մարզի առողջապահական հիմնարկների հետ շարունակվել են իրականացվել բարեգործական ծրագրեր, մատակարարելով՝ դեղորայք եւ բժշկական պարագաներ և զույք է հատկացրել մարզի մի շարք բուժհաստատությունների:</p>
		<p>ՀՀ ԿԳ նախարարության, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության և «ԳՐԵՖ» կազմակերպության միջև 2008 թվականին ստորագրված եռակողմ համագործակցության պայմանագրի շրջանակներում</p>		2008-2012	2013թ տարվա ընթացքում	<p>Շարունակվել է «ԳՐԵՖ» թոշակառու մանկավարժների ֆրանսիական կազմակերպության առաքելությունը Լոռու մարզում, որի ներկայացուցիչն իրականացնում է ՎՊՄԻ-ի, ԵԿՏԱ-ի Վանաձորի մասնաճյուղի եւ «Մխիթար Գոշ» հայ-ռուսական համալսարանի ֆրանսերեն դասավանդող դասախոսների, ինչպես նաեւ, Վանաձոր, Ստեփանավան եւ Ալավերդի քաղաքների դպրոցներում ֆրանսերեն լեզու դասավանդող ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ</p>
		<p>Համագործակցություն Բելառուսի Հանրապետության Վիտեբսկի շրջանի և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի միջև</p>		2012թ	2013թ տարվա ընթացքում	<p>1. Շարունակվել են Վիտեբսկի մարզի հետ բարեկամական կապերը: 2012թ-ին կնքված «Բելառուսի Հանրապետության Վիտեբսկի շրջանի և ՀՀ Լոռու մարզի միջև համագործակցության Համաձայնագրի շրջանակներում այս տարվա օգոստոսին Լոռու մարզից մարզպետի տեղակալ Տ.Բաղդյանի գլխավորությամբ պատվիրակություն այցելեց Վիտեբսկ: Այցի հիմնական նպատակը այս անգամ համագործակցության համաձայնագրի կնքումն էր Վիտեբսկի մարզի Գլուբոկսկոյեի շրջանի Ուելոլվսկի պատգամավորների գյուղական խորհրդի և Լոռու մարզի Հաղպատ համայնքի միջև 2. ՀՀ Լոռու - ԲՀ Վիտեբսկ համագործակցության շրջանակներում հատուկ հրավերով Ստեփանավան քաղաքից 1 երեխա մասնակցել է «Սլովյանսկի Բազար» երգի միջազգային փառատոնին:</p>
		<p>ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի, ՀՀ բնապահպանության նախարարության եւ Լոռու մարզպետարանի միջեւ կնքված փոխըմբռնման հուշագիր</p>		2011թ	2013թ.	<p>Հուշագրի շրջանակներում անց են կացվում մարզի բնապահպանական կարևոր խնդիրների քննարկումներ, հասարակական լուսմներ մարզպետարանում և մարզում գործող երեք բնապահպանական տեղեկատվական Օրհուս կենտրոններում (Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան): Հասարակական լուսմներին մասնակցում են, ինչպես համապատասխան գերատեսչությունների և կազմակերպությունների փորձագետներ, այնպես էլ շահագրգիռ ՏԻՄ-երի, բնապահպանական ՀԿ-ների, ԶԼՄ-ների և հասարակության ակտիվ ներկայացուցիչներ</p>

<p>Լոռու մարզպետարանի եւ Ֆրանսիայի Պրովանս-Ալպ Կոտ դ'Ազյուրի մարզի միջեւ Համագործակցության շրջանակային պայմանագիր</p>	<p>2008թ</p>	<p>2013թ-ի տարվա ընթացքում</p>	<p>Լոռի-ՊԱԿԱ համագործակցության շրջանակներում իրականացվող երկու ծրագրերի համար, որպես համաֆինանսավորում, ՀՀ կառավարությունը Լոռու մարզին տրամադրել է 13.0մլն դրամ</p> <p>1.Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՊԱԿԱ-Լոռի համագործակցության շրջանակներում նախաձեռնվող զբոսաշրջության կենտրոնի նախատեսվող տնօրենը զբոսաշրջության կենտրոնի աշխատանքների կազմակերպչական աշխատանքների կազմակերպման հմտություններ ձեռք բերելու համար գործուղվեց Ֆրանսիա վերապատրաստման:</p> <p>2.Նոյեմբեր ամսին մարզ են այցելել Օտ Տեղ դը Պրովանս ֆրանսիական կազմակերպության տնօրենը եւ նախագահը՝ Լոռու մարզում տուրիզմի զարգացմանն ուղղված ծրագրին աջակցելու նպատակով, կազմակերպվել է սեմինար Թումանյանի տարածաշրջանի 7 համայնքների ղեկավարների համար, նպատակը՝ ներկայացնել Ֆրանսիայում եւ առհասարակ աշխարհում ինչպես է կազմակերպվում տուրիզմը, դրա տնտեսական շահավետությունը եւ ազդեցությունը համայնքների զարգացմանը, համայնքների մասնակցությունը տուրիզմի զարգացման գործում:</p> <p>3.Նախաձեռնվել է Ֆրանսիական «ԿՐԵԱՍՈԼ» միկրովարկավորումների մասնագիտացված ինստիտուտի հետ իրականացնել միկրոկրեդիտների (փոխառությունների) տրամադրում Սպիտակի արհեստների պալատի արհեստագործներին ծրագիրը, որի հաջող ընթացքը կհանգեցնի հետագայում նույն ծրագրի տարածումը մարզի ողջ տարածքում: Այդ կապակցությամբ սեպտեմբեր ամսին 2-ամսյա ժամկետով Մարսել է մեկնել Սպիտակ քաղաքից երիտասարդ մասնագետ վերապատրաստման:</p> <p>4.Սեպտեմբերի 20-ից 25-ը ԿՐԻՊՏ մասնագիտացված կազմակերպության հրավերով Լոռու մարզից 5 հոգուց բաղկացած մասնագետների խումբ է մեկնել ՊԱԿԱ, ագրոտուրիզմի ոլորտում փորձի փոխանակման, ինչպես նաեւ ծանոթանալու ինչպես է կազմակերպվում Ֆրանսիայում ագրոտուրիզմը, հետագայում Լոռու մարզում նմանատիպ մոդել տեղայնացնելու նպատակով:</p> <p>5.Լոռի-ՊԱԿԱ համագործակցության շրջանակներում Մարսելի փոխքաղաքապետի հրավերով հունիսին տեղի ունեցավ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի գլխավորած պատվիրակության աշխատանքային այց՝ ՖՀ Մարսել քաղաք, մասնակցելու Հայ-ֆրանսիական առևտրա-արդյունաբերական պալատի նախաձեռնությամբ կազմակերպված «Հայկական առևտրային ցանց» եռօրյա գլխավոր համաժողովին: Այցի ընթացքում մարզի պատվիրակությունը մասնակից է դարձել մի շարք կարևոր հանդիպումների, միջոցառումների: Տեղի է ունեցել հանդիպում Ա. Նալբանդյանի եւ ՊԱԿԱ ռեգիոնալ խորհրդի նախագահի առաջին տեղակալ Պատրիկ Ալմանի հետ, ով համակազմում է արտաքին կապերը: Հանդիպման ընթացքում հստակեցվել են 2012թ. դեկտեմբերին ստորագրված ՀՀ Լոռու մարզի և ՊԱԿԱ ռեգիոնի միջև «2012-2014 համագործակցության համաձայնագրի» շրջանակներում իրականացվելիք ծրագրերի հետագա աշխատանքները:</p> <p>6.Հունիսի 3-7-ը Լոռու մարզ էր այցելել ՊԱԿԱ-ի Միջազգային կապերի եւ Միջերկրական համագործակցության Հայաստանյան ծրագրերի պատասխանատու Լոռա Կառլոն: Այցելության նպատակը՝ Լոռու մարզում անասնաբուծության, տուրիզմի և ագրոտուրիզմի բնագավառներում 2012-2014թթ մարզում իրականացվելիք ծրագրերի գործողությունների պլանի իրականացման աշխատանքների մանրամասն կազմակերպումը</p>
---	--------------	--------------------------------	--

				2013թ-տարվա ընթացքում	7. Մարտի 6-ին Ֆրանսիական DSF (Ցավեր առանց սահմանների) ծրագրի պատասխանատու, մանկահոգեբույժ Ժերար Ռոբենի այցը Վանաձոր: DSF կազմակերպության ներքո ստեղծված «Նոենի» ՀԿ-ի միջոցով կազմակերպվել է «Աուտիզմը եւ դրա հնարավոր խնամքը» կոնֆերանս – քննարկում Վանաձոր քաղաքի բուժհաստատությունների, մանկատան և խնամքի կենտրոնի հոգեբան-մասնագետների և շահագրգիռ այլ հաստատությունների մասնագետների մասնակցությամբ 8. Շարունակվել է Ֆրանսիայի Պրովանս-Ալպ Կոտ դ'Ազյուրի մարզի և Բանյո քաղաքի համատեղ ֆինանսավորմամբ «Նոենի» ՀԿ-ի կողմից իրականացվում է Վանաձորի քաղաքի 4 պոլիկլինիկաներում, Վանաձորի մանկատանը և երեխաների խնամքի կենտրոնում և Ամրակից համայնքում ADBB մայրերի ինքնաջակցման խմբերի, խորհրդատվությունների, հոգեշարժողականության խմբերի կազմակերպում, «Փոքրիկ նապաստակ» ծրագրի իրականացում, մանկապարտեզներում հոգեշարժողականության և այլ տիպի աշխատանքների իրականացումը	
	Լոռու մարզը որպես Եվրոպական Ռեգիոնների Ասամբլեայի լիիրավ անդամ		2011թ	2013թ տարվա ընթացքում	Էլեկտրոնային փոստի միջոցով շարունակվել է Եվրոպական Ռեգիոնների Ասամբլեայի գրասենյակի հետ կապը, իրականացվել են անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումներ	
	Ֆրանկոֆոն Ռեգիոնների Ասոցիացիայի լիիրավ անդամ		2011թ նոյեմբերի 13	2013թ մարտ-մայիս	Հայաստանում «Ֆրանկոֆոնիայի օրեր» ծրագրի մեկամյակի շրջանակներում, մարտ ամսից Լոռու մարզի դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում (Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի Վանաձորի մասնաճյուղ, Վանաձորի մանկավարժական ինստիտուտ) կազմակերպվել են Հայաստանում ֆրանկոֆոնիայի օրերին նվիրված միջոցառումներ:	
3.		ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպանի այցը Լոռու մարզ			2013 դեկտեմբեր	Դեկտեմբերի 10-ին Լոռու մարզում էին ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության լիազոր և արտակարգ դեսպան Իվան Վոլինկինին՝ տիկնոջ հետ և Գյումրիում ՌԴ գլխավոր հյուպատոս Եվգենի Կոնիշևին՝ տիկնոջ հետ: Այցի նպատակը ճանաչողական էր, քննարկվեցին հայ-ռուսական տարածաշրջանային երրորդ համաժողովի շրջանակներում մարզում հյուրընկալված Ստավրոպոլի մարզի պատվիրակության ընդունման ու պայմանավորվածությունների մասին:
		ՀՀ արևտրաարդյունաբերական պալատի նախաձեռնությամբ ՌԴ Տոմսկի գործարարների այց Լոռու մարզ			2013թ սեպտեմբեր	Սեպտեմբերի 11-ին Լոռու մարզպետարանու տեղի ունեցավ հանդիպում ում ՀՀ արևտրաարդյունաբերական պալատի նախաձեռնությամբ կազմակերպված ՌԴ Տոմսկից ժամանած և Վանաձորի գործարարների հանդիպում համագործակցության կապեր հաստատելու նպատակով: Հյուրերին ընդունեց փոխմարզպետ ԱԴարբինյանը: Հանդիպման ընթացքում քննարկեցին համագործակցության զարգացման նոր հնարավորությունները և գործարար կապերի ամրապնդման ուղիները:

<p>Աշխատանքային, ուսուցողական, ճանաչողական այցեր օտարերկրյա պետությունների տարածքային միավորներ և միջազգային կազմակերպություններ, մարզ այցելող օտարերկրյա պետությունների տարածքային միավորների, միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ընդունում և ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացում</p>	<p>ՀՀ-ում Եվրոպական պատվիրակության ղեկավար-ղեկական Տրայան Հրիպեայի եւ ՀՀ-ում Լիտվայի արտակարգ եւ լիազոր դեսպանի այցը Լոռի</p>				<p>Դեսպանների տարածաշրջանային այցերը սկսվել էր Լոռու մարզից: Նպատակը գործնական էր, նա ներկայացրեց Լոռիում ԵՄ-ի ֆինանսավորմամբ իրականացման ընթացքում գտնվող 12 խոշոր ծրագրերի մասին, որոնք կշարունակվեն հաջողությամբ մինչև դրանց նախատեսված ավարտը: 2014թ-ին Եվրամիության կողմից մեկնարկվելու է մասնավոր բիզնեսի զարգացման մեծածավալ ծրագիր, որին կարող է մասնակցել նաեւ Լոռու մարզը: Նա մտահոգություն հայտնելով Մաքսային Միությանը և միասնական տնտեսական տարածքին միանալու մասին ՀՀ-ի ղեկավարության հայտարարության վերաբերյալ, որը թեև գոհունակությամբ չի ընդունվել Արևմուտքի կողմից և Եվրամիություն-Հայաստանի Հանրապետություն առևտրա-մաքսային որևէ համագործակցություն անհամատեղելի է ՀՀ-ի նոր կարգավիճակի պատճառով, այնուհանդերձ ԵՄ-ն շարունակելու է իր մասնակցությունը ՀՀ-ում ժողովրդավարության ամրապնդման, կոռուպցիայի դեմ պայքարի, մարդու իրավունքների պաշտպանության, տնտեսական լծակների խթանման և այլ հարցերում:</p>
	<p>ՀՀ-ում Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպանի այցը Լոռու մարզ</p>			<p>2013թ նոյեմբեր</p>	<p>Նոյեմբերի 21-ին ճանաչողական այցով Լոռու մարզում էր ՀՀ-ում Ուկրաինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Իվան Կուխտան: Սա դեսպանի առաջին պաշտոնական հանդիպումն էր մարզպետ Ա.Նալբանդյանի հետ: Հանդիպման ընթացքում խոսվեց հետագա համագործակցության ոլորտների ընդգրկում: Պաշտոնական հանդիպումից հետո Լոռու մարզպետը, Վանաձորի քաղաքապետը և դեսպանը մասնակցեցին Վանաձորի «Լոռի» ժամանցի կենտրոնում կազմակերպված «Վերբիջեն կա» համույթի համերգին՝ նվիրված հիմնադրման 15-ամյակին: Համերգին մասնակցում էր նաև ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի օգնական Նարինե Գույանը:</p>
	<p>ՀՀ Լոռու մարզի եւ Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետության հետ համագործակցության ստեղծում</p>			<p>2013թ սեպտեմբեր</p>	<p>1. 2013թ-ի սեպտեմբերին տեղի է ունեցել Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանի գլխավորած պատվիրակության այցը Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետություն: Այցի նպատակն էր Լոռու եւ Աջարիայի միջեւ բարեկամության կապերի ամրապնդումը: Այցի ընթացքում ստորագրվեց «Փոխըմբռնման հուշագիր ՀՀ Լոռու մարզի եւ Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետության միջեւ»: Մասնակից կողմերն իրենց մտադրությունն արտահայտել «Առևտրի, տնտեսական, գիտատեխնիկական եւ մշակութային համագործակցության մասին» շրջանակային պայմանագրի կնքման վերաբերյալ: 2. Համագործակցության շրջանակներում մարզպետի տեղակալ Տ.Բադոյանի գլխավորած Լոռու մարզի պատվիրակություն մեկնեց Բաթումի, մասնակցելու Աջարիայի հայկական համայնքի գրանցման եւ Աղբյուր թերթի 20-ամյակի առիթով կազմակերպված միջոցառմանը:</p>

		ՀՀ-ում Արգենտինայի արտակարգ և լիազոր դեսպան Դիեգո Էռնեստո Ալվարես Ռիվերան այցը Լոռու մարզ		2013թ 1-ին կիսամյակ	Մայիսի 17-ին ճանաչողական այցով Լոռու մարզում էր ՀՀ-ում Արգենտինայի արտակարգ և լիազոր համատեղ դեսպան Արգենտինայի հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան, նորին գերազանցություն Դիեգո Էռնեստո Ալվարես Ռիվերան՝ տիկնոջ հետ:
	G2iA ֆրանսիական կազմակերպության ներկայացուցիչների այց Լոռու մարզ		2011թ	2013թ տարվա ընթացքում	1.Հունիսի 2-ին Օձունում տեղի ունեցավ միջհամայնքային հանդիպում «ստեղծագործական հոսքերի համագործակցություն» ծրագրով, որին մասնակցություն ցուցաբերեց մարզպետարանը եւ 'Լոյս' հիմնադրամը: Քննարկվեցին հուլիսի վերջին Օձունում անցկացվելիք «Օձունի գանձեր» խորագրով փառատոնի անցկացման և կազմակերպչական հարցեր տարածաշրջանի 8 համայնքների ղեկավարների մասնակցությամբ: Արդյունքում հուլիսի 20-ին «Լոյսի» ուսանողների մտահաղացումներով կազմակերպվեց փառատոնը: 2.Մայիսի 9-ին տեղի ունեցավ մարզպետ Ա.Նալբանդյանի հանդիպումը G2iA ֆրանսիական կազմակերպության և նույն կազմակերպության հայաստանյան ներկայացուցիչների հետ: Այցի նպատակն էր Օձուն համայնքում ֆրանսիական Ռիոն Ալպեր ռեզիոնի ֆինանսավորած թեյաբույսերի կոոպերատիվի ստեղծման, չորանոցի կառուցման և փաթեթավորման սարքավորումների հետագա գնման որոշ կազմակերպչական հարցերն քննարկում: Արդյունքում նոյեմբերին վերը նշված Օձունի հարթակի 8 համայնքներ ստեղծեցին գյուղատնտեսական կոոպերատիվը:
		Ֆրանսիական «ԱՖՐԱԴ» ասոցիացիայի ներկայացուցիչների այցը Լոռու մարզ		2013թ տարվա ընթացքում	Ապրիլի 8-ին կազմակերպության ներկայացուցիչները հանդիպեցին Լոռու մարզպետին: Այցի նպատակը Լոռու մարզում էկոտուրիզմի զարգացման ծրագրերի իրականացման համար նախնական պայմանավորվածությունների ձեռք բերում: Օգոստոս ամսին կազմակերպությունը զբոսաշրջիկների խումբ բերեց Ստեփանավանի տարածաշրջան:
		ՀՀ-ում Ղազախստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Այիմդոս Բոզժիգիտովի այց Լոռու մարզ		2013թ հուլիս	Հուլիսի 17-ին Լոռու մարզպետարանում մարզպետի տեղակալ Վ.Ասատրյանն ընդունեց ՀՀ-ում Ղազախստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Այիմդոս Բոզժիգիտովի գլխավորությամբ պատվիրակությանը: Այցի նպատակն էր բարեկամական կապերի հաստատումը մարզի հետ, ինչպես նաև մասնակցելու ՀՀ-ում Ղազախստանի Հանրապետության դեսպանատան և Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի կողմից Վանաձորում կազմակերպված «Միջազգային կազմակերպություններում Ղազախստանի և Հայաստանի համագործակցությունը միջազգային անվտանգության տնտեսական և բնապահպանական կայուն զարգացման ոլորտներում» թեմայով գիտաժողովին:

		<p>«Հույս Հայաստանի» կազմակերպության ներկայացուցիչների այցը Լոռու մարզ</p>	<p>2012թ.</p>	<p>2013թ տարվա ընթացքում</p>	<p>Մարզպետարանում հանդիպման ժամանակ քննարկվեց դեռ 2012թ-ին նախատեսված, բայց չիրականացված Ստեփանավան քաղաքում սոցիալական օգնության կենտրոն ստեղծելու հարցը՝ Ֆրանսիական Հույս Հայաստանի և Առաքելություն Հայաստանի համագործակցությամբ, Ռիոն Ալպի աջակցությամբ: Ֆրանսիական Ռիոն Ալպեր ռեգիոնը ֆինանսավորում է այս ծրագրում մրցույթով անցած մասնագետների վերապատրաստումը և համագործակցող կառույցների մասնագետների մեկշաբաթյա այցը Ֆրանսիայի Դեսին քաղաք, նմանատիպ կենտրոնների աշխատանքները ուսումնասիրելու համար: Լոռու մարզի մասնագետների 3 հոգանոց խումբը Ռիոն Ալպ մեկնեց սեպտեմբեր ամսին: Ստեփանավանի քաղաքապետարանը ծրագիրն իրականացնելու համար տրամադրել է տարածք, սակայն ֆինանսական աղբյուրների հստակեցումից հետո կսկսվի իրականացման փուլը:</p>
		<p>Ֆրանսիական քայլարշավորդների դեպարտամենտի ներկայացուցիչների այց Լոռու մարզ</p>	<p>2013-2014թթ</p>	<p>2013թ տարվա ընթացքում</p>	<p>Մարտի 21-ին տեղի ունեցավ Լոռու մարզպետի մոտ ֆրանսիական քայլարշավորդների դեպարտամենտի ներկայացուցիչների հանդիպում: Այցի նպատակն էր Ստեփանավան քաղաքում և հարակից համայնքներում էկոտուրիզմի զարգացում: Արդյունքում մինչև տարեվերջ կազմակերպությունը Ստեփանավան քաղաքի զբոսաշրջության կենտրոնի հետ համատեղ կազմեց էլեկտրոնային զբոսաշրջային քարտեզ համացանցում, որն ընդգրկում է առայժմ մարզի Ստեփանավանի տարածաշրջանը: Ծրագիրը կշարունակի 2014թ-ին, քարտեզի աշխարհագրությունը կմեծանա ընդգրկելով մարզի ողջ տարածքը:</p>
<p>Բազմակողմ այլ միջոցառումներ</p>	<p>Հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության երրորդ համաժողով</p>			<p>2013թ նոյեմբեր</p>	<p>Դեկտեմբերին Գյումրիում կայացած Հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության երրորդ համաժողովին մասնակցություն ունեցավ Լոռու պատվիրակությունը մարզպետ Ա.Նալբանդյանի գլխավորությամբ: Իսկ ոլորտային քննարկումների կլոր սեղաններին մասնակցություն ունեցան Լոռու մարզպետարանից պաշտոնատար անձինք, համայնքների ղեկավարներ: Հայաստանի Հանրապետության և ՌԴ միջև տնտեսական համագործակցության հարցերով միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում դեկտեմբերին Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանը հյուրընկալեց ՌԴ-ի Ստավրապոլի տարածաշրջանի պատվիրակությանը: Բանավոր համաձայնություն ձեռք բերվեց հաջորդ տարեսկզբին երկկողմ համագործակցության կոնկրետ առաջարկություններով հանդիպել կրկին:</p>

	<p>Հայ-Ֆրանսիական ապակենտրոնացված 2-րդ համաժողով</p>		<p>2013թ հոկտեմբերի 15-17</p>	<p>Հոկտեմբերին Հայաստանի եւ Ֆրանսիայի ավելի քան 30 քաղաքների եւ մարզերի մասնակցությամբ ՖՀ Ռիոն Ալպ ռեգիոնի Վալանս քաղաքում տեղի ունեցավ Հայ-Ֆրանսիական ապակենտրոնացված 2-րդ համաժողովը:</p> <p>Հայկական պատվիրակության կազմում ընդգրկված էր նաեւ Լոռու մարզի պատվիրակությունը, մարզպետ Ա.Նալբանդյանի գլխավորությամբ:</p> <p>Համաժողովի աշխատանքների իրականացման համար նախապես ստեղծվել էին չորս աշխատախմբեր: Հաշվի առնելով Լոռի-ՊԱԿԱ ակտիվ համագործակցությունը, Լոռին մասնակցում էր դրանցից երեքում՝ տուրիզմի, տեղական տնտեսության և գյուղատնտեսության զարգացմանը խթանող աշխատախմբերի աշխատանքներին:</p> <p>Տեղական տնտեսության աշխատաժողովում Մարսելի փոխքաղաքապետ Դիդիե Պարակյանի հետ համանախագահողն էր Լոռու մարզպետ Նալբանդյանը, իսկ հայկական կողմից պատասխանատուներ էին հանդիսացել Լոռու մարզպետարանը և Արթիկի, Երևանի, Գյումրիի, Արտաշատի ու Արմավիրի քաղաքապետարանները: Մարզի ղեկավարը հանդես է եկել ելույթով, որտեղ ներկայացվում էր թե ինչ հանրային քաղաքականություն է իրականացվում ՀՀ-ում համայնքների կողմից տեղական տնտեսության զարգացմանը նպաստելու համար, տնտեսական կառավարման ինչ գործիքներ են օգտագործվում, ինչ հնարավորություններ և նորարարական փորձ է ներդրվում՝ ի շահ բնակչության:</p>
	<p>Արևելյան գործընկերության տարածաշրջանային համագործակցության ամրապնդմանն ուղղված քայլեր Հայաստան- Վրաստան տարածաշրջանային համագործակցության ծրագիր»</p>		<p>2013թ հոկտեմբեր</p>	<p>Հոկտեմբերի 11-ին Ստեփանավան քաղաքի մշակույթի տանը տեղի ունեցավ «Արևելյան գործընկերության տարածաշրջանային համագործակցության ամրապնդմանն ուղղված քայլեր Հայաստան-Վրաստան տարածաշրջանային համագործակցության ծրագիր» խորագրով առաջին համաժողովը: Ծրագիրը, որ ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից, Հայաստանին և Վրաստանին տարածաշրջանային համագործակցության նոր հնարավորություններ է ընձեռում:</p> <p>Համաժողովը երկու նպատակ ուներ. երկու երկրների սահմանային բնակավայրերում գործող պետական և հասարակական կառույցներին տեղեկացնել ծրագրին մասնակցելու դեպքում առկա հնարավորությունների և առավելությունների մասին, ինչպես նաև մտքերի արտահայտման հարթակ և խոսափող տրամադրել՝ տարածաշրջանային համագործակցության հնարավորությունների և նախադրյալների վերաբերյալ լայն քննարկումների համար:</p>